Կուարտ: Է գլխաւոր քղբ համանուն դւոփի, մերձ յակունս մնանտէկո գետոյն, առ երի էսդրէլլեայ լերին. ունի ամրօց հզօր. և է եղանակիստ, որոյ եղան է ը պատրիագաւ լիսպոնայ: Ունի բնակիչս 2300. և 4 ժողովրդապետական եկեղեցիս, բաց՝ ի մայր եկեղեցւոյն՝ որ է հինդերորդ. և 2 մենաստանս կրօնաւորաց, 2 անկեղանոցս, մի՛ վն աղքատաց, և միւս ևս՝ վն հիշանդաց:

Լահիօ, կմ Լահիա: Գլխաւոր քղբ՝ ի համանուն դւոփի իւրում, մերձ առ տօվլրօ կմ դուրիս գետն, ի գեղեցիկ վայրի, պատել շուրջանակի լերամբք: Ասի, թէ այս քղբ շինեցաւ՝ ի յունաց լակոնացւոց. և անունանեցին զնա Լահիա: կմ Լահիանի նորին. յետոյ կոչեցաւ քղբ Լահիէնայաց. ապա Լահիա. կմ Լահի: Եւ է եղանակիստ. ը պատրիարդաւ լիսպոնայ: Ունի 3 թաղս. 4000 բնակիչս. և ժողովրդապետէն եկեղեցիս, 4 մենաստանս, 2 անկելանոցս

Քառորդէւ պիտանու, որ թարգմանի դղեակ սպիտակ է, դլիսաւոր աւան և դղեակ 'ի համանուն դաւառի խրում, ը մէջ երկուց հեղեղատաց՝ ոլք զեղուն 'ի թէյօ գետն. և է քննեան միաբանուն : Աւնի բնակիչ 3700, 2 ժղվարդապետական եկեղեցիս, 2 մենաստանս, և 2 անկելանոցս : Անդ է ձմերանոց եղամին կուարտայ. որ իբր 'ի բշխ անդ անցուցանէ զնմեռն, զի ունի անդ մեծաշէն ապարանս : Փինհէւ, 'ի հն' Փինհէւն : Աւան երեելի կառուցել ը լանջակողմն լերին. առ որով հոսի փոքրիկ գետ մի համանուն : Եւ է պարսպապատ. և առ պարսպօք նր ունի վեց աշտարակս . Թիւ բնակչաց նր է իբրեւ 1500 կմ 1600. և ունի 6 ժղվարդապետական եկեղեցիս, և մենաստան մի, և 2 անկելանոց : Աշխէլա : Է աւան երեելի, և ամրոց հզօր առ սահմանօք սպանիոյ . ունի բնակիչ իբրեւ 2000, և մի միայն ժղվարդապետական եկեղեցի, և մենաստան մի, և 2 անկելանոցս :

Իսկ այլ գլխաւոր տեղիք սյոր նահանգի՝ են այսոքիկ . Դրէակ հոպէինոն . հսկուերէա . Աշխանիւ . Կուն . Բայպէիր . Բէրէիրա . Մոնտէմոր, կմ Վէլս . Բէնելա . Ֆէյրա . Ալէր . Սէ վնաւուցիս պէտոյ . Իւնի հադու . Քօվէլնա . և Բէնամատօր . որ է աւան մեծ . ունի բնակիչ իբրեւ 2300. և 3 ժղվարդապետական եկեղեցիս . և 2 անկելանոցս . զոր ե ալփոնսոս աքքայն արար Կամուռի :

Նահանգ գ . Անդուե տուլրօ և մինչօ :

Այս նահանգ ձգի 'ի հիւսիսակողմն փորդուքալսյ . ը մէջ տուրօ կմ տովրօ, և մինհօ գետոց, յորմէ առնու և զանուն . նմին իրի և լատիներէն կոչի . Խնդէռանէնչիս . այս է, միջագիտ . իբր զի է ը մէջ երկուց գետոց : Տովրօ, կմ դուրիսս գետն բաժանէ զնա 'ի պէիրայ նահանգէն . իսկ մինհօ կմ մինիոս գեան 'ի կալիցիս նահանգէն սպանիացոց : Տարածութէն նր 'ի հիւսիսյ ը հարաւ՝ է իբրեւ 54 մղոն . իսկ յարեելս՝ 36 : Եւ է սա մի 'ի բազմավաճառ նահանգացն փորդուքալսյ . սակա երկուց նախայիշատակեալ գետոց, որք մոտանեն 'ի ծովն . ը որս մարթ է նաւուց 'ի ծովէ մոտանել 'ի ներքս 'ի

նահնգ սնդր, և սակա պատուական նահնգատից
իւրոց, յորս երեւելի են նւհնգիստք փորդօի, և
միանայ: Այս նահնանգ առ համեմատութեր տա-
րածութեն իւրոյ յաւելա բազմամարդ է ք զայլո-
ւ բաժանի ՚ի 4 դրաս, որը են կախմարանէն: Վան-
աս ՓօնԱկ Փի Հիմա և Փորդո: յորս են 2 քղթք ենթա-
նիստք, և 963 ժղվադապետութեց: և ՚ի 1732 ու-
ներ բնակիչս 430372: Խոկ գլխաւոր տեղիք նր են
այսոքիկ:

Պահիա: Ե գլխաւոր քղթք համօրէն նահնգին՝ ՚ի
գեղաղթարձ դաշտավայրի, պատետը շուրջանակի
գաւառու և տէսթէ գետովք: կալեալ զանուն՝ ՚ի
մասնաւոր իմն ձեզ հանդերձից, զոր նախնի բնա-
կիչը նր զգենութին: և է արքեպօսանիստ: որոյ արք-
եպսն է նախապատիւ առաջնորդ փորդուքտայ, ը
նմին և գերագոյն իշխան քղթքի հանգերձ շրջակայ-
վիճակուն իւրով: Թէպտ մարթ է յատենէ նր բո-
դրել յարքունի ատեանն: Այս քղթք ունի բնա-
կիչս իւրեւ 1200, և 5 ժղվադապետական եկեղեցիս,
հանդերձ մայր եկեղեցեաւ՝ որ մեծ է և հին: և 8
մենաստաննս, և 2 անկելանոցս, և գոլրոց մի երեւե-
լի: Ըստ ոմանց՝ քղթք այս շննեցաւ՝ ՚ի յունաց-
ապա յաջորդաբար տնիկաւ. ը նրութ կարկեդոնաց-
ւոց, հւովմայեցւոց, շնետաց, գթաց, մռւզրեաց,
և հուսկ յետոյ ը տրութ թիգրցն լէսնի: Հուտիմայե-
ցիք անուննեցին զնա Օքոստ, և թէպրք շնետաց անդ
հաստատեցին զաթու իւրեանց: Տեսանին՝ ՚ի նմ
մինչեւ ցայսօր մնացորդք նախնի հոյակադ շնուռա-
ծոց: յորս երեւելի են քարաշէն ջրմաւղք, և կրկէս,
կմ անփիթէատրոն մի մեծաշէն:

Կախմարանէն: Ե գլխաւոր աւան համանուն գաւառ-
ուի: որ զսկիզբն իւր ունի՝ ՚ի մենաստանէ քենե-
դիկաեան միանձանց, որ հիմնեցաւ իւրեւ՝ ՚ի 927-
առ որով յետոյ շննեցաւ գեզդ աննշան: որ ապա-
տու սակաւ սակաւ ըարձակել եղեւ աւան կմ քղթք
նշանաւոք, և աթոռ առաջնոց թէպրաց փորդուքտ-
այ: պարմորապատ, որոյ ընջապատն է իւրեւ 1850
քայլ. և բաժանի ՚ի հին և ՚ի նոր քաղաք. և ու-
նի իւրեւ 5000 բնակիչս, 4 ժողովրդապետականն
եկեղեցիս, երկուս ևս յարունարձանս իւր: 4 ան-
կելանոցս, մի՝ վաղ աղքատաց, և 3 վահ հիւնդաց.
և 2 մենաստաննս: մի՝ ՚ի ներքոս, և միւս ևս՝ ար-
աքոյ:

Վանաս, կմ Ալյաննես: Ե գլխաւոր բերդաքղթք հա-
մա-

մանաւն քւոի , մերձ՝ ի տեղին՝ ուր լիմա գետն մտանէ ՚ի ծովն . մեծ՝ բարեշէն՝ և տմուր . ունի բնակիչն իրեւ 7000 և 2 ժղվարդապետկն եկեղեցիս . 7 մենաստանս , 2 անկելանոցս , և նւկնդիսա փոքրիկ : Զայս քղք հիմնեաց դե ալիօնսոս արքայ փորդու-

Քալայ :

Քօնտէ ո՞ի լիմա . որ թարդմանի կամուրջ լիմային գլխաւոր աւան՝ ի համանուն քւոի առ լիմա գետով . ՚ինմին տեղւոջ՝ ուր առ ժմլօք հռովմայեցոց եր քղքն անուանեալ Արդոստ շիմինացու : Այս աւան Երկիցս քանդեցաւ , և Երկիցս Վերստին շնուեցաւ . մի՝ ՚ի 1126 . և Երկիդ՝ ՚ի 1360 . Ունի բնակիչն իրեւ 2000 . մի մեծաշէն ժղվարդապետական եկեղեցի . 3 մենաստանս . 4 անկելանոցս :

Փորդո , կմ՛ Օդորդո : Գլխաւոր քղք համանուն գտառի առ առվլո գետով . որ 10 մղննաւ հեռի՝ ՚ի քղքէ աստի մոտնէ՝ ՚ի ծովն : Եւ է առ քղք պարապապաս Եղիսանիստ , որ զինի լիսպօնսայ արքայանիստ քղքի՝ է յաւէտ բաղմամարդ փարթամ և բաղմամարդ և բարեշէն՝ ՚ի համօրէն փորդուքալ : Ունի նւկնդիստ պատուական , և առ նովաւ բերդամուր . բայց մուտ նը վտանգաւոր է յամառան , զի ժայռք և խաղիսաղք դտանին առ նովաւ . այլ ոչ ՚ի ձմերան , զի յսյնժամ ջուրք գետոյն միշտ աճեցուն են , ուստի և բարձր : Չորս արուարձանս ունի , և 7 ժղվարդադետական եկեղեցիս հանդերձ Եղիսանիստ եկեղեցեաւ , որոյ Եղիսն է ը արքենկուաւ պրակայ . և 12 մենաստանս , յորոց զղք արտաքոյ պարապաց են . և քանի մի անկելանոցս , և բնակիչն իրեւ 20700 : Այս քղք զակիզբն իւր ունի՝ ՚ի Քանչ , կմ՛ Ճայէտ անուանել քղքէ , որ էր հանդէսպ նը յայն կոյս գետոյն , ՚ի վը ժայռաւոր սեպացել չերին . ուր ոմանք ՚ի բնակչոց նը շնուեցին տունս՝ ՚ի ստորհադայն և յարմարագոյն վայրի . որ և յայն սակա կոմեցաւ Փորդուանչ . և Փօրդո ո՞ի գանչ . որ զինի ժմկց Էղեւ Եղիսաբան . որոյ Եղիսունք՝ փորդուքայեան , կմ՛ փորդեան Եղիսունք կուկին . և յայսմանէ բոլոր նն անուանեցաւ փորդուքալ . ող և ՚ի վեր անդր նշանակեցաք : Գինի այսոր նահանդի հաջուկաւոր է յեւրոսիս :

Պարէւլօս : Է աւան փոքր առ գաւատո գետով սրա բապաւոր . որ մի միայն ժղվարդապետական եկեղեցինի , և միւս ևս կանոնիկոսական , և մենաստան մի : Սեբաստիանոս արքայն փորդուքալաց՝ անուանի

եաց զնա Դրտութի . սյը ոյժմ ոչ ես յիշատակի այս
անուն :

Գրադնէս : Աւան ամուր առ մինհօ գետով մերձ 'ի
բերանն , ը որ զեղանի 'ի ծովին . ուր և ձեացուցա-
նէ փոքրին կղզի . յոր կայ ամրոց մի , և մենաս-
տան . և ունի մի միայն ժղվէրդասպետական եկեղե-
ցի . և 2. մենաստանս . և 3. անկելանոցս . յորոց
մին է վո զինունորաց : Ըստ ոմանց շինեցաւ Քղքս
այս 'ի դ ալփոնսոսէ արքայէ 'ի 1265 :

Վալենցիա : Աւան և գղեակ ամուր առ մինհօ գե-
տով , կառուցեալ ը զաւ 'ի վայր բարձրաւանդակ
վայրի , որ ունի 800 կմ² 900 բնակիչա :

Իսկ այլ նշանաւոր տեղիք սորին նահանգի՝ ևն այ-
սպիսէ : Մընառն . Ալգուս դէ Հալտէլէլ . Մէվաս .
Եւրոպիսնդէ . որ է նաւահանգիստ փոքր , ևն :

‘Կահանգ դ . Կոռազօսմօնդէս :

Կյս նահանգ՝ լատ՝ “Դրտանամուդանա անուանել , որ
թարգմանի՞ յայնկոյս լերանց , այսպէս կոչեցու-
ատէս դրից իւրոց . քղի 'ի կողմանէ էնդուէ առվլո
և մինհօ նահանգին՝ ձգի յայնկոյս մարած լերանց :
‘Ի հիւսիսոյ՝ ունի իւր սահման զիալեցիս , որ և
գաղղեկիա , յարևելից՝ զէռն , 'ի հարաւոյ՝ նոյնալէս
զէռն , և մասամբ իմն զակէիրա , իսկ յարևմտից՝ ըն-
մասին զնահանգն էնդուէ առվլո և մինհօ . և ը մա-
սին զպէիրա : Տարածուի նը 'ի հիւսիսոյ ը հարաւ-
է 90 մղոն . և յարևելից յարևմտւոս՝ 60 : Երկիրն
ը մեծի մասին լեւնային է , խոժոռ , անջրդի , և
անբնակ . սակայն ուրեք ուրեք ունի հավիտու ար-
դաւանդս , որք բերեն ցորեան , հաճար , մորացո-
րեն , դինի , և աշցի ազգի պտուղս : Բաց 'ի տովլու
գետոյն , ունի և այլ չորս փոքրիկ գետա , որք ևն
թամէկա , Քօքիտ , Թմունէլս , և Սօղոր , որ և Սաքոր ,
որք ելաննն 'ի տովլու գետոյն , և են իրրե առաջքնը :
Մէծագոյն մասն սորին նահանգի՝ է կալումծ մատ-
նաւոր տեարց . պը մասնաւոր իշխանաց , արքեղսին
պրակայ , բերնարդեան՝ և բենեֆիկտեան միան-
ձանց , և այլոց կարգաց կրօնաւորաց , և կարգաց
ասպետաց , ողջ քնեան կարգի առավետաց՝ և այլոց :
Եւ բաժանի յերիս դւռս , որք 'ի գլւատոր տեղեաց

իւրեանց կալեալ զանուն, կոչին. Մ' իւրանդա, Վելս
ռեսլ, և Մ' օնտօռջ, յորս 'ի 1730 էին իբրև 135808
բնակիչք. բաժանելք 'ի 55 ժղվրդապետութաւ : Իսկ
գլխաւոր տեղիք սորին նշնդի են հետագայքոյքոյ :
Մ' իւրանդա ու Տաշը : Է գլխաւոր քղք և բերդ հզօր
համանուն դւռի, առ առհմանոք սպանիոյ, յապա-
ռափուտ և 'ի լեռնային վայրի առ տովքո գետով :
Եղասանիստ, որոյ ենպն է ը արքենկաւ պրակայ. մի
միայն եկեղեցի ունի, որ է մայր եկեղեցին . և իրրե
700 բնակիչք, և 2 անկելանոցս : Երկիցո առաւ քղքո
այս, մի 'ի գաղղիացոց, և եկիդ 'ի սպանիացւոց .

զոր անդրէն առին փորդուքալք :

Պլատոնց, 'ի հն' Պլէիանցիս : Է միւս ևս նշանաւոր
քղք սորին նշնդի . մի 'ի հնագոյն քղքացն փորդու-
քալք . որ ունի բնակիչք իբրև 2700. և 4 մենատ-
տանս, զոր 'ի 1762 առին սպանիացիք, և քանդեցին
զամրութիս նը : Թէսկէտ և չէին ինչ հաստատուն :
Քաջը, կի՞մ Քապէս : Աւան ամսուր առ թամէկա գե-
տով . ուր ունի 2 արոնարձանս, և 2 ամրոցս, և
բնակիչք իբրև 2000. ը մէջ նը և միւռմ յարունար-
ձանեացցն՝ է կամուրջ հոյտկապ 'ի վը թամէկա գե-
տոյն, շինել 'ի նախնի հոռվմապեցւոց . երկայն՝ իբրև
92 երկրաչափական քայլ, իսկ լայն՝ 3 : Այս աւան
շինեցաւ 'ի հոռվմապեցւոց 'ի փլարիտէ վեսպասիա-
նոսէ . յորմէ ասի, թէ կոչեցաւ Ջւրէտ Քլբիսէ . որ
'ի նախնումն էր յոյժ մեծ . որոյ հետք երեին և այժմ՝
Վելս ռեալ . որ թարգմանի գիւղ արքունի : Գլխա-
ւոր աւան համանուն դւռի . պարսպաւոր մեծ և
բարեշէն, ը մէջ երկուց փոքրիկ գետոց՝ որք զե-
ղուն 'ի տովքո . մեծ մասն բնակուեց՝ է արագոյ
պարսպաց, և սակաւ՝ 'ի մէջ պարսպին, որ և կոչի
հին քղք . երկու և եթ ժղվդապետական եկեղեցիք են
'ի նը, 3 մենաստանք կրօնաւորաց, և 2 անկելանոցք :
Զայս քղք շինեաց գիտնէսիոս արքայ փորդուքալք :
Մ' օնտօռջ, որ և Յուստուն գի նօնտօռջ, այլ և Մ' օն-
տօռջուն : Է իշխանանիստ և գլխաւոր աւան համո-
նուն դւռի, 'ի լայնածաւալ և 'ի զունարձալի դաշտա-
վայրի, առ ոտամբ բոպորէտօ լերին, ը մէջ տովքո
և սոսպոր գետոց . ունի շուրջանակի պարիտուզ հինս,
և ամրոց . և մի միայն ժողովքապետական եկեղեցի .
2 անկելանոցս, և մի մենաստան . և բնակիչք իբրև
1300 : Զայս աւան 'ի 1762 առին սպանիացիք . այլ
յետոյ անդրէն լինքէանս ընկրկեցին զայն փորդու-
քալք :

Միքանդելքա : Աւան ամուր, այլ փոքր՝ առ թուելաց գետով. որ ունի մի միայն ժղվալպակն եկեղեցի : **Մօնտ աշխանէ,** որ թարգմանի լեառն գեղազուարձ : **Աւան փոքր՝** այլ ամուր, առ փոքրիկ գետով, 'ի հիւսիսային եղերս սորին նահանգի :

Կահանգ Է. Աւենթէօ :

Ամբյշարձակնէնկացն փորդուքալայ. 'ի հիւսիսոց ունի իւր սահմանակից զէսդուեմատուրա և ըղուպէիրա. յարեւելից՝ զապանիա. 'ի հարաւոյ՝ զալկարավիա. իսկ յարեւմուից զծովիս. Տարածուենր ըստ ոմանց 'ի հիւսիսոց չ հարաւէ է 120 մզոն, և 'ի հարաւոյ Շարեւմաւտա. 90 : Իսկ ըստ այլոց՝ երկոքին ես են 102 մզոն : Անունդ Ալենթէօ՝ ծագի ՚ի դրից իւրոց. զի զի 'ի կողմանէ էսդուեմատուրային հայելով, և այլոց հիւսիսային նահանկաց, զորս նախ չ տրուե իւր եանց ընկրեւցին փորդուքալք, և յայնկոյս թէյօ գետացն. յօրմէ եւանունդ ալենթէօ: Երկու գետս ունիր զմէյօ, և զիուատիսանա: Երկիր նր ըստ մեծի մասին դաշտային է, և քաջայարմար 'ի մշակուեն. որոյ գըլխաւոր բերք են մորացորեն, և գարի. ունի և գինի, և ձէթ, և աղցի աղցի պտուղս, և ձուկին առատ, և վայրենի որս, այլ և աղնին մարմարիոն. քարինեալու այլ այլ դոյնս, ողղ սպիտակ, կանաչագոյն, և կարմիր սպիտակախախառն: Առատուեն սորին նէնդի՝ մէնդ այնիր նմի՝ ողք հարկաւոր են 'ի պահպանուեցրաց, արար զոա տեղի և աստարել իմն գմնդակ պարզմաց. ողղ տեսանի յերկոսին պարզմաւնս, որք վճարեցան 'ի ձեռն դաշնադրուեց եղելոց 'ի 1668. և. 'ի 1715. վնկ թէքրք փորդուքալայ՝ իրաւամբ փոյթ մէծ առնեն՝ ունել 'ի սմա բերդս ամրակուռս: Այս նահանդ բաժանի 'ի ե. գւասս. ողք 'ի գլխաւոր տեղեաց իւրեանց ունին զանոււն. Փօրդ աշխանէ. իշխան. իշխանք. իշխանքող. և Պէյտ, կմ Պէյտ. յօրս 'ի 1732 էին իբրեւ 265223 բնակիցք, բաժանելք 'ի 355 ժողովրդապետուիս: Իսկ գլխաւոր աեղեք նր են այսոքիկ:

Փօրդ աշխանէ. 'ի հն' Բօրդուս աշխանք. որ թօրդ նի նահանդիսա զուտքթարթար: Ե գլխաւոր քղք իւր համանուած գւասի, ամրացուցեալ ըստ հին սովորութեալարս.

պարսպօք և աշտարակօք . և եղանակաւոտ . ունի բնակից իբրև 5600 . և անկելանոց , և 2 մենաստանս . և 5 ժղվագնդէն եկեղեցիս . հեղձ մայր Եկեղեցեաւ որոյ եղան է չը պատրիարքաւ լիւապոնայ :

Գրաւութեան պարագաւոր ի հիւսիսակողմն սորին նահանդին . որ ունի մի միայն ժողովրդապետական եկեղեցի , և 1 անկելանոց և մենաստան մի : Եւ է գլխաւոր տեղի կմ առաջնորդարան կարգի ասպետացն մազդայի . որոյ առաջնորդն կմ հրամանատար՝ հրամանաւ հառվմայ հյրակտին ունի քղթական և եկեղեցական իշխանութիւն վրա այսր առանի , և շրջակայ միհակի նը . որ և է արտաքոյ եղանական իբաւանց .

և յայն սակս ոչ է թեմեղսի ուրուք :

Քառեալ պէ շնուք : Աւան ի վր լերին . որ ունի բանակից իբրև 5700 . և 3 ժողովրդապետական եկեղեցիս :

Աշխան : Է առան ի բարձրաւանդակ վայրի առ համանուն փաքրիկ գետով . որ ունի բնակից իբրև 14 , կմ 15 հշր , և մի միայն ժողովրդապետական եկեղեցի , և 2 անկելանոցս , և վանք մի կարգին ասպետացն ավելայ . որոց՝ տեղիս ոյս է գլխաւոր տեղի և աթոռ . որ և յայն սակս յաւանէ աստի առնու զանուն . Կարգ ասպետացն ավելայ անուննել . որ և հիմնեցաւ առ ժմկօք ը ալփոնսոսի արքային :

Աշօնդէս : Է առան ամուր ի բարձրաւանդակի , առ տեղեաւն՝ ուր ալեկութեթէ և գայէ փոքրիկ գետք խառնին ի միմեանո . և ունի բնակից իբրև 1200 . և մի միայն ժողովրդապետական եկեղեցի : Զայս աւան ըն պետրոս արքայն ի 1674 արար Մարտէնսի .

որ և իշխանութիւն առ եւրոպացիս :

Նիւա . կամ Նիյա : Աւան երևելի ի սմին քւռի , որ ունի իբրև 19000 բնակից . և 2 ժողովրդապետական եկեղեցիս ևեթ :

Եւլաս , կմ Հելլէ : Գլխաւոր քղք , և բերդ ամուր համանուն գւուի ի բարձրաւանդակի . եղանակաւոտ , որ ունի 4 ժողովրդապետական եկեղեցիս . հանդերձ մայր եկեղեցեաւ . որոյ եղան է չը արքեղաւաւ . էվրայ . և 7 մենաստանս , 2 անկելանոցս . և թիւն բնակչաց . որք ի քղքի անդ՝ և որք ի շրջակայ միհակի նը . է 12400 : ի մէջ նշանաւոր իրաց այսր քղքի գլխաւորն է ջսհոր , կմ գուբ մի ջրոյ , որ շունի զնուր և ջամադ մզնաւացի երկայնուք , որ մերձ ի քղք անգր այնչափ ի մեր բարդարանայ , մինչև պէտք ունիլ երից կամացաց ի վր միմեանց , առ ի հաստատիւ ի նու :

նո, և հեղուլ զջուր՝ ի դուք անդր : Շըմակայ վիճակ
քղքիս բերէ գինի ազնիւ, և ձեթ :

Վիւլակիսոցա. որ թարգմանի՝ քղք, կմ աւան զուարէ
թագեղ : Ե քղք գեղեցիկ և բարեշէն՝ յարգաւանդ
և ՚ի զուարձալի վայրի . ունի գվեակ ամուր, և ըը-
նակիչ իրրե 3700. և 2 ժողովրդապետական եկե-
զեցիս, 7 մենաստանս, և 2 անկելանոցս : Հնաշոդոյն
էր ամոռ՝ արքսյազուն դքսից պրականցայի :

Էլշրա. ՚ի հն՝ Եպրագ : Ե դլիտոր բերդաքաղաք
պարսպապատ համանուն դւոխ, յըարձակ գաշտի,
որ գրեթէ յամ կողմանց պատեալ է լիրամբք . արք-
ենդսանիստ : Ունի իրրե 12000 բնակիչս, բաժան-
եալս՝ ՚ի 5 ժողովրդապետունն, հանդերձ արքենդսակն
եկեղեցեաւ . և քանի մի անկելանոցս, յորս դլիտ-
որքն երկու են, և 22 մենաստանս ՚ի քղք անդր :
և արտաքոյ նը . այլ և համալսարան երեկի : ՚ի
1540 սոսկ ենդսութին նը ամբորձաւ ՚ի սկասիւն ալզ-
ենդսուն . և այնուշետե եվես սա արքենդսանիստ :
որ ունի Շ իւրե զերկու ենդսարանս՝ զելվասայն, և
զիարօին : Այս քղք ՚ի նախնութն կոչեցաւ Ալու-
գայէտանուն յաւլիսուն սակս բազմապատիկ շնորհաց և
ազատուեց, զոր շնորհեաց նմ յուլիսս կայսրն : Եւ
ապա անունանեցաւ Ելզրա, կմ Եպրագ . յորմէ եւ
ռամկական անունդ՝ Էլշրա :

Այս գւռ ունի Շ իւրե և զայլ աւանս, յթ Ռէտօնփու,
և **Վիւլանա, զորոց չունիմք ինչ դրել :**

Էսթենձու: Վւան և բերդ հզօր, մի ՚ի դլիտոր տու-
րոցաց փորդուքալայ, յարդաւանդ և ՚ի գեղեցիկ
վայրի . ունի բնակիչս իրրե 6500. զերիս ժողովրդա-
պետական եկեղեցիս . 2 անկելանոցս, 6 մենաստանս :

Առ սովին աւանաւ ելանէ մարմարիոն սրատուական,
զոր իրրե յզկեն . ոչինչ Շ հստ է յալտաստր կճոյ :
Պէյս, կմ Պէյս : ՚ի լիսաւոր քաղաք իւր համանուն
դւոխ, ՚ի բարձր և յարդաւանդ վայրի . ՚ի հն՝ կոչէր
Բատս աւիուսդա, և Բատս իւլիս, խազուղութօդուստայ,
և Խաղաղութ յուլեայ . ունի բնակիչս իրրե 600. 4
ժղվդպտէն եկեղեցիս . 7 մենաստանս . 2 անկելանոցս :

Յնագոյն ենդսանիստ էր, այլ այժմ օչ ես :

Ռէտօնփու, ՚ի հն՝ Ուլիքփում : Ե աւան երեկի . որ
ունի իրրե 2000 բնակիչս . մի ժղվդպտէն եկեղեցի .
2 անկելանոցս : **Առ սովլաւ ՚ի 1139. ալփոնսոս ենրիկ-**

իկց եա սաստիկ պաղմբ Շ դէմ մուզրեաց :

Մուլրա : Վւան և ամրոց . որ ունի իրրե 4000 բն-
ակիչս :

Սեւէտա . Եւ աւան և ամրոց . ունի և սա իբրև 4000
բնակիչն :

Են և այլ ևս ամրոցք և աւանք 'ի սմին նահանգի ,
որոց անունանք են . Լու լիդիք . Օւկէնշա . Քահի
Տայթ . Մօնթալզ , և Ֆեռեյբա :

'ի սմին նահանգի է ծովակ մի , որ յորժամ մօտ 'ի
վր կոյ փոթորիկ ինչ , սաստիկ շառավիւն արձակէ .
որ լսի իբրև 20 մղոնաւ հեռի : Ոմանք ասեն , թէ
զայն շառավիւն արձակէ տեսակ մի ձկան , և ոչ ջուրն :

Նահանգ Շ. Ալկարվիա . կմ Ալկարվէ :

Առջի սա և թիգրուի . 'ի հիւսիսոյ՝ ունի իւր սահ
ման զալէնթէօ նահանգն), յորմէ անջատի 'ի
ձեռն երկուց երեւելի լերանց) . յարեւելից զանաւալու
սիս նահանգ սպանիոյ . իսկ 'ի հարաւոյ և յարեւմուից
զծովն : Տարածուի նր յարեւելից Շ արեմուտս՝ է
իբրև 108 կմ 112 մղոն . իսկ 'ի հիւսիսոյ ը հարաւ
20 և 24 : Բատ ոմանց՝ զայս անուն ունի 'ի մուզրեաց .
Վոր զի մինչեւ էին նք մտել անդ , յայլ անուն կոչէր :
Ոմանք առեն , թէ անունդ Ալկարվիա , նշանակէ
Երկիր դաշտային և արդաւանդ . իսկ այլք թէ Եր-
կիր արեմտեան , կմ Երկիր Եղեր Յի : Երեք նշնւոր
սարք են առ սովին նէնդաւ 'ի ծովափնեայս . իր Սար
սիր վինւնցիստի . 'ի նախնումն Սբ հրուտանդան անուն-
եալ : Սար իտքէնեա . և Սար սիր նարիանս :

Յուղին Ֆմկս ալկարվիա Շարձակագոյն ևս էր . վա-
զի ձդեալ տարածէր ը բովանդակ ծովեղերեայս ,
սկսել 'ի սարէ սըյին վինչենցիսի , մինչեւ ցալմէիրա
Քղք գրանատայ սպանիոյ , և պարունակէր ը իւրեւ
նաև մասն ինչ 'ի յանդիմանակաց ափրիկոյ : Իսկ այժմ
ոչ տարածի աւելի , ք որչտփ ինչ վերագոյնդ նշա-
նակեցաք : Գլխաւոր բերք սր են գինի , ձէթ և
մնյացորեն . բայցյաւէտ աւատատ են 'ի նմ ազգի ազգի
պատուական պառուղք . իր թուզ , նուշ , շամիչ . ևն :
Չորս քղքս ունի . 12 աւանս . և 60 դիօղս . և 67
ժողովրդապետուիս . յորս 'ի 1732 էին 18873 առնք ,
կմ դերդաստանք . և 63688 բնակիչք :

Այս թիգրուի կմ նահանդ՝ է ը իշխանութ փորդու-
քուաց արքայի . յորոյ վր թէպէտ ը բջում Ֆմկս
սկնդէին թէրք սպանիոյ ունիլ իրաւունս , սակայն
'ի

՚ի վերջը՝ ՚ի ժք դարսուն տուաւ արքային փորդուքաւ լայ. որ և յայն սակա ՚ի վերտառուե իւրում կոչի, ինչը աշարձեայ յայսկոյ և յայնիոյ ծովուն յագեհիէ: Զալ-կարմիա անունդ՝ տուել լայնաբար փինկ մասին նր. զի զի բոլոր աշկարմիա ըստ նախնի շարձակուե իւրում՝ ոչ է ըստ բութ նր. ոյլ մասն ինչ յայսկոյս ծովուն, և մասն ինչ յայնիոյս յափրիկէ. զի և անդ՝ ՚ի ծովել զերեայս ուրեք ուրեք տիրեն փորդուքաւք. զորս ՚ի տեղիս իւրեանց ունիմք յիշտկել: Արդ՝ թղթուեն աշկարմիայ՝ որ յայսկոյս ծովու, բաժանի յերիս գաւառս, որք են Լահօն, Տալիք, և Փարոս, ՚ի դլիսաւոր տեղեաց իւրեանց կալել զանուն:

Լահօն: Ե գլխաւոր քղք համանուն իւրուի առ ծոցով ծովու ՚ի հարաւոյին ծովեղերեայս. ուր ունի նաւահանգիստ պատուական բաւական նաև մեծամեծ նաւուց: Ասեն, թէ ՚ի սմին վայրի էր նախնի Լատող ցիս գերահռակ քղքն: Ունի երկու ամրոցս, և իրը 2600 բնակիչը. 2 ժողովրդապետական եկեղեցիս. 4 մենաստանս. և է աթոռ կը ուսակալ իշխանին. և գլխաւոր սպարապետին ալկարմիայ:

Աշուա-Քէյք: Աւան, որ ունի բնակիչը իրը 1900. և երկու ժողովրդապետական եկեղեցիս: Նախնի դշեակ սր նշանադրի ՚ի կնիքն թագաւորուեն փորդուքաւք:

Գուգուլույ:

Վլլա նուլ պէ գորդինո. որ թարգմանի նորադիւղ նւհնդսուի մասնայ: Եւ Սաֆէն: Աք են երկունշանաւոր աւանք, և նւհնդսուի ՚ի սմին գւռի:

Թաշչւա: Ե գլխաւոր քղքապարիստ համանուն գւռի առ ծոցով ծովու, ուր ունի նւհնդիստ պատուական երկու ամրոցովք ողաշտպանել: Պալլիք նր գեղեցիկ է և զուարձալի. և բաժանիյերկու թեմս. յո՝ յարեելեան և յարեմուկան, ՚ի ձեռն սէգվար գետոյն: Արաւաքոյ պարսպաց իւրոց ունի դշեակ ամուր ՚ի պատսպարութ, և բնակիչը իրը 4700. 2 ժողովրդապետական եկեղեցիս. 2 սմինելանոցս. 5 մենաստանս: Ունինք համարին, թէ ոյս է նախնի Պալլա քաղաքն:

Լէլէ: Քաղէլլա, Քասութրանարիմ: Աք են երեք նշանաւոր աւանք և ամրոցք ՚ի սմին գւռի. յորոց երկու յետինքդ ծովեղերեայ են:

Ջարօ, որ և Փարօս: Ե գլխաւոր բերդաքղք ՚ի համանուն գւռի, ամրացուցել ըստ այժմեան սովորուե, ՚ի գեղեցիկ գաղտապայացրի առ ծոցով ծովու, որ ձեռցուցանէ անդէն նւհնդիսա ողատուական: Այս քղք ան-

անշատի 'ի սարեն սըյն մարիամու . (զոր պլինիոս
ՀՀ-անդան իւնիան անուանէ,) անձուի նեղուցաւ ծո-
վու , ումկ . Պարբերա կոչեցեալ : Եւ է եղասանիստ -
ունի իբրեւ 4600 բնակիչու . 2 ժողովրդապետական
եկեղեցիս , հանդերձ մայր եկեղեցեաւ . 2 անկելա-
նոցս . 4 մենաստանս : Եշտարան քղթիս զառաջենն
որ ցՈստնոպա . ապա փոխեցաւ 'ի Ալ-լիչ . և անտի
'ի քղթս յոյս :

Ալ-լիչ : Է քղթ փոքր առ գետավ , որ մերձ'ի վելսա
նովա տէ փօրդիմաս մտանէ 'ի ծովիս : Ունի ընակիցս
իբր 1600 . և մի միայն Ժողովրդապետական եկեղեցի .
յնչադոյն եղասանիստ էր , այլ այժմ ոչ ես : Այս
քղթ հանդերձ շրջակայ վիճակաւ իւրով է սեփական
կալուած թագուհւոյն փորդուքալայ :

Այստի ինչյաղադս թին փորդուքալայ . իսկ զայլ
կալուածս , զոր այս արուե ունի յայլ և այլ մասունս
նի , նշանակեացուք յիւրաքանչիւր տեղիս : 'Ի վերջին
թմիիս խոռվուե՞ բժմ ինչ կորոյս փորդուքաւ յիւրոց
սահմոնաց , զորս պարզաւ էառ սպանիս միարանելլ
գաղղեացիս . բայց 'ի գաշնադրուե պառույօզ քղթի
որ եղեւ 'ի 1801 . 'իյուն 6 . յետս գարձոյց սպանիսա
զնմ . բաց 'ի օլիվէնցայէ և յիւր սահմանէն , որք են
յայսկոյս կուատիանա գետոյն . սահման որոշիչ 'ի
մշերիուց արուեց գնելով զնոյն կուատիանա դեռ :



ԱՅ Խ Ե Բ Հ ։ Բ ։ Ս Պ Ա Ն Ի Ա ։

ա. Աղասի, և Դիբու:



ատենագիրք յունաց՝ յորոց առին և բա-
նաստեղծք լատինացւոց, զայս Շ կոչե-
ցին իպէրէտ, կմ հետէրէտ ։ զորմէտ ատեն թէ ա-
ռաջին բնակիցք՝ ի ժամանել անդր, իբրև ոչ ևս տե-
սին ցամաք երկիր յովկիանոս անդր, որ յերից կող-
մանց պատէ զսպանիտ, համարեցան թէ յեզր Շի
հաօեալ իցեն ։ յայն սակս ՚ի կիր առին զանունգ
իպէրէտ ։ որ ՚ի բարբառ փիւնիկեցւոց նշանակէ եղը
Շի ։ վնկ և զթու կոչեցին իպէրէտ ։ և զմեծադոյն
գեան զոր գտին անդ՝ իպէրէտ ։ իսկ մտաենադիրք
յունաց կոչեցին հետէրէտ ՚ի հետպերոս համատե-
ղուէ, որ ը երեկս երեխյարեմուտոս ։ իբր զի սողա-
նիտ ը դրից յունաստանի՝ ձգի ը արեմուտոս ։ և
առ՚ի որոշել զնա յիդալիոյ, զոր նովին անունամբ կո-
չէին, (վո՞ զի և իդալիա է ը արեմուտոս դրից յու-
նաստանի), կոչեցին Վէրջն հետէրէտ ։ Ունակք հա-
մարին թէ մասն ինչ ուպանիոյ ուրեք ուրեք ՚ի նր
դիրս կոչի մարդիւ ող յերեմ ։ Ֆ. Զ. այլ այս ան-
ստոյդ է :

իսկ այժմեան Սպանիտ անունդ ը պոշարայ ծագին
՚ի բարբառոյ փիւնիկեցւոց ։ յորում սեպան նշանա-
կէ զաեսակ ինչ կենդանւոյ, որ ամ իրօք նման է
ծագարի ։ զի ող ասեն վարրոն, եղիանոս, պլինիոս ։
և ստրարոն, ՚ի հնումն կարի յաճախել էին յայսմ
Շի այն ազգ կենդանեաց, որք անբաւ վնասս գոր-
ծէին ։ ՚ի հաստատութիւն կարծեաց նց՝ է պատկեր
դրամոց ինչ ադրիանոսի կայսեր, յորս ճագալրն է
նշան սպանիոյ ։ որ է ցոյց իմն թէ ճագարի ՚ի նախիւ-
նի ժմկց անտի սեփական ինչ էր այսմ Շի ։ ապա
հաւանական երեխ, թէ նախնի փիւնիկեցիք կամ
կարկեդոնացիք՝ ՚ի կենդանւոյ անտի անունեցին
զայս Շ, կմ դէթ գնասն նր ցոր վայր ծանօթ էր
նց ։ Սփանիտ, կմ իսպանիտ ։ իսկ անտօն մոյեան
զսնունդ Սպանիտ հանէ յարդաւանդուէ երկրի նր ։
Քանզի ասէ, թէ գտանին հին դրամք հռովմայեց-

ւոց, յորս դրոշմեալ կոյ կին 'ի զինունորական հանդերձս, ունելով՝ 'ի գլուխն սուղաւարտ, և 'ի միում ձեռին նիզակ, իսկ 'ի միւսումն փունջ հասկաց ցորենոյ. առ որով դրել կոյ Հիսուսնիտ. իբր թէ Եսքան, որ թարգմանի Եւ հայ, կմ Հայուսեպ. կամելով ցուցանել զարգաւանդութիւն երկրին այսր Շի: 'ի սոյն միտս գտանին և այլք ոմանք, զորոց զբանսն իբր աւելորդ իմն 'ի բաց թողեալ, մատիցուք 'ի սասրագրուել այսր Շի:

Արդ Սպանիտ ունի իւր սահման յարեւելից՝ զանգաղիացւոց կմ զֆրանսա, յորմէ անջատի բերքենեան լերամբք. 'ի հիւսիսոյ՝ զովկիանոսն ագլանդեան. որ յայսմ վայրի 'ի հն' կոչէր ՈՎԱՆԻԱՆ գոնդապըւտն. այժմ Ալիսանայ. յարեւմտից՝ մասամբ իմն զարեւմաեան ովկիանոսն, և մասամբ իմն զփորդուքալ՝ իսկ 'ի հարաւոյ՝ նոյնալէս զովկիանոսն, և զծովն միջերկրեայ:

Բ. Տարածութ, և Բնակչութ Սպանիոյ:

Ապանիս է մի յըարձակագոյն Շացն եւրոպիոյ ըմէջ 11 և 21 աստիճանսց երկայնուեն. և 37 և 43. ½ աստիճանաց լոյնուեն. և բովանդակ տարածութեն նր ը ՀՀդադոյն չափու Շագրաց՝ է 136000 քառակուսի մլոն Շագրական. այլ բնակիցք նր առհամեմատութ լայնածաւալ տարածուեն իւրոյ՝ սակաւ են 3 Բնովանդակ սպանիս ունի 139 քղքու, և աւանս բջմա. յորոց յոլովք ոցինչ ըհատ են 'ի քաղսքաց. իսկ թիւ բնակչաց նր 'ի ժմկս դ փիլիսպոսի էր 9 միլիոն. իսկ այժմ ը ոմանց՝ իբրև 7 և կէս. իսկ ըստ այլոց 8 միլիոն. Են ևս՝ որք հայուն 10 միլիոն. այլ սք ողկ թուին, և զթիւ բնակչաց քանարեան, կմ երանելեաց կղղեաց առնուն 'ի միասին: Սակայն սպանիս կարօղ էր դարմանել եւ ռապատիկ ևս առաւել բնակիչս, եթէ բնակիչք նր ժրաշան էին 'ի հողագործուեն, և յայլ պէսպէս արուեստու: Քանզի ողկ 'ի ժմկս դթաց, և մուղրեաց թիւ բնակչաց նր 'ի 20 միլիոնէն եհաս ց30 միլիոն, նոյնակէս և այժմ մարթ էր լինել:

Պ. Եւրեմ Գետի Սպանիոյ :

(ոմանս 'ի գլխաւոր գետոց ստորագրեցաք 'ի նախընթաց գլուխոգ 'ի կարդի գետոց փորդու քաշայ . որ զմէլյօ , որ և տադոս . զտօվրո , որ և դուրիոս . զմինհօ , որ և մինիոս . զկուատիանա , որ և անաս . վայ յայսմ վայրի զանց արարեալ վնոքք , զերկու և եթ նշանաւոր դետա սպանիոյ ստորագրեցուք :

Կուագացչելի , որ և լանէ 'ի բառից աստի արարացւոց , Ավորի ըլ ծըռնը որ թարդմանի մեծ գետ . 'ի նախնուռման Պէտիս , Դասրդէստան , և Ջեւէստան : Այս գետ ելանէ 'ի սեկուրոյ լեռնէ , և հոսեալ իրրե մըննս 6 , ապա առ կասորլաւ փոխէ զընթացս , և մոտնէ ը մէջ լերանց . և անաի ելեալ , և վատկա բէմս յինքն ընկալել , 'ի սկզբան անդ ուղղի ը հորաւ . ապա զկուատալիմար վտակն ևս ընկալեալ , փոխէ զընթացս ը տրեմուտս , մինչև ցսիվլէլեալ , և անտի վերստին դառնայ ը հարաւ , և շարունակեալ զդնացս իւր մինչև ցորե զուկաս պառամետոյ , գնայ ինանէ յովկիսանուն :

Եպրօ , 'ի հն' իտէրս : Ելանէ 'ի հին քասդելիոյ 'ի սանտիլեանայ լեռնէ յերկուց ականց տռ սահմանօքն ասբուրիոյ դւռին . և յինքն ընկալել իրրե 30 վտակս , և գետս մանունս , առ թուտելաւ մինի նաւարկելի . բայց սյն ձդի մինչև ցթորթոսա և եթ . զի անաի և անդր վտանգաւոր է նաւարկել 'ի նմ . սակս բազմապատիկ ժայռից , որք աստ անդ ցրուել կան 'ի յատակ նր : Ապա գահավէժ ընթացիւք զե . զու 'ի միջերկրական ծովն , առ որով գործէ կզրեակ մի փոքրիկ : Զուր նր բարի է յարբումն մարգկան , և անասնոց , և պատուական յոյժ 'ի լունանուլ և 'ի սպիտակացուցանել զկտաւու . նորին սղագաւ լցել 'ի տակառս , բարձել տանին ցհրուաւոր տեղիս :

Պ. ՕՌ Սպանիոյ :

Իմեծագոյն մասին սպանիոյ օդն և ըոր և մաքուր . յամնեանն յունիտի , յուլիսի . և յօդառտոսի՝ տօթ տունջեան ստոստիկ է , մինդ 'ի միջին կողմանս սպանիոյ . սակայն 'ի վը այսր ամի ը ան թմկս ցրտութեն դիշերոյն այնպէս ազդուական է . մինչև սարսուիլ ճնողհորդաց , և այլոց բացութէից :

Դ հեւսիսային կողմանս և 'ի լեռնային աեղիս՝ ու
աւել ցաւրտ է քը 'ի հարաւայինս , իսկ 'ի մերձա-
կայ վայրս երկուց ծովուց՝ խոնաւ է օդն և ծանր :
Աւր ուրեմն լինի անդ անձրև . և 'ի ձմերան ոչ եր-
բեք այնպէս սառի անդ գետինն , մինչև կարծրա-
նալ : Այս անբարեխառնութիւնութիւն տօմույ և ցրտոյ՝ է
պատճառ անագան բուսանելոյ սերմաննաց : 'ի լե-
րանց կալիցիոյ շնչէ Երբեմն ցրտային ինչ հողմն՝ որ
մեծապէս լինասէ առողջութիւն , որոց ոչ զգուշանան
անձանց :

Ե. ԲՆԴ Սպանիս:

Պսպանիս կարի նուազութեն է արմաեաց , մանդ
ցորենոյ . որոց սուածին պատճան՝ է պակասունի
երկրադործուն առ հեղտուն բնակչաց . վնդի թե-
որէտ երկիր նը 'ի բնշմ տեղիս ցը է և անքեր , և
շնունային , նաև սաստիկ ատօթն տունջեան՝ և ան-
բարեխառն ցրտութիւն գիշերոյ խափաննեն զանութեն
արմունաց , սակայն յայտ է 'ի պատմաբանից և յար-
խարհադրաց , թէ 'ի նախնութն առատուն էր արմու-
եաց 'ի սպանիս . ապա այժմեան նուազունի յաջ դայ
տու 'ի ցոյէ երկրադործուն , ուստի և բնշմ ուրեք
գաշտք լայնածաւալք կան մնան անգործ և անդար-
ման : Ենթ պատճան՝ է անբարեխառնութիւն տօմունի .
վնդի մերձ 'ի ժմկո հնձոց՝ ոոկ 'ի յունիսի և յուլի-
սի գոյով տօմուն սաստիկ , և անձրև սակաւ , ար-
մունիքն մինչեւ իցնն հասել , ցամաքին . և ոչ կարծրա-
նան առաւել ք զարմտիս լիվնիոյ , որ 'ի լէհ , ուր
'ի ձեռն հրոյ կարծրացուցանեն :

Ուստի գլխաւոր արմունիք նը են մօրացորեն , գա-
րի , և սեսակ իմն ոլեռան , և որիզ , զոր 'ի քաղա-
լոնիս և եթ մշակեն . և այլ աղջք ինչ արմաեաց ,
բայց և այն սակաւ . զորոց զպակամութիւն յատուց
աշխարհաց լցուցանեն : Այս առատութիւնն է անդ
ազդի աղջի պատուական պարոց . զի բաց 'ի հա-
սարակ պտղոց , ունի և պէսպէս պատուական
տսնձն , և գեղձս , և ձեթ ընտիր , և թուզ ,
և շամբի , նուշ , շաղանակ , լեմոն , նարինջ , կիտ-
րոն , նուռն , ևն : Աւնի և այլ աղջի աղջի բերու
յայլ և այլ գլաս . ոոկ 'ի մանիքա , և յանտալուսիա
լինի քըքսւմ , այն է՝ զաֆրան առատ յոյժ , և բա-
ռական ոչ միտյն սպանիացոց , (որք գրեթէ զամ-
էերակուրս իւրեանց նովաւ համեմեն ,) այլ և համօ-
լէն

րէն եւրոպից . տանին և յամերիկա , և յայլես կողմանս նի : 'ի վալենցա , յանտալուսիս , 'ի նաւառուա , 'ի քասդիլիս , յարակոնայ , 'ի կադալոնիս , և 'ի կալեցիս՝ ելանէ դինի ազնիւ , պէսպս գունով և համով . որք զօրեղ են և ծաղկահոտ , և են՝ որք քաղցր և թեթև և օդտակար . զոր բարձեալ տանին յայլ և այլ կողմանս նի , մանաւանդ յեւրապիա . որք և 'ի համարի են ամուրեք . ող և շամիչն սպանիոյ : 'ի կռանադա լինի եղեգն շաքարաբեր , ող յոջադոյն լինէր և 'ի վալենցա , այլ այժմ ոչ ևս . դրեթէ ոչ ուրեք յնի այնշափ շաքար ծախի , որչափ 'ի սպանիա . վոյ չէ նմ բաւական ոչ միայն իւրն ,

այլ և ոչ այն՝ զոր բարձեալ բերեն յամերիկայ : Ունի և մեզը առատ և պատուական յոյժ՝ անուանի լը համսրէն եւրոպիա . զոր և 'ի գեղ բժշկութեն 'ի կիր արկանեն . ող և մետաքս բշմ , որ առաւելապէս լինի 'ի վալենցա , 'ի մուրզիա , 'ի կռանադա . և յարակոնա : Իսկ վուշ , և կանեփ , և բամբակ ստկաւ , որ և ոչ տասներորդ մասին ընակչաց նր բաւական լինի . այն զի և զսակաւն զայն համայն ոչ գործեն , այլ յօտարաց գնեն պէսպէս կտաւս , ող և առասանս , պարանս , 'ի պէտու նաւուց : Ունի և աղ առատ 'ի ծովէ և 'ի ցամաքէ . և հօտս ըն սիր ընտիր խաշանց անբաւս , ուստի և տար /ընտիր և ազնիւ բշմ յոյժ , զոր տանին և յայլ նո 'ի գործել չուխայ . և երիմարս ընտիրս , մընդ յանտալ . սիա և յասթուրիա . և ջորի բշմ , ող և արջառ . այլ կոդի սակաւ գործի 'ի սպանիա . վոյ զի սպանիացիք փիսկ կոդւոյ՝ 'ի կիր արկանեն ձեթ : Յանտալուսիա որսան և վայրենի ցուլս , և ձուկն առատ 'ի ծովէ և 'ի գետոց :

Բաց յայսցանէ՝ ունի և աղդի ազդի խոտս , և բանջարս , և արմատս 'ի պէտու դեղորէից և ներկարարաց . ող Սօզա անուանեալ խոտն , զոր 'ի գործ ածեն 'ի բաղադրութեն օճառի , և ապակւոյ : Եւ անտառս մեծամեծս , յորոց հատանեն փայտ բշմ 'ի պէտս շինուեն նաւուց՝ և այլոց շինուածոց : Առաջ և առատաբեր բովս ոսկւոյ և արծաթոյ , որք կոսրի հռչակեալ են առնտինի մատենագիրս . սակայն թաղել կան անգործ առ հեղուեն բնակչաց , շատուցեալ այնու՝ զոր բերեն յամերիկոյ : Գտանին անդ և այլ աղդի ազդի մետաղք , և հանք . դր կապար , անտգ , երկաթ , սնտիկ , պաղեղ , անտիմոն , կադֆա , Առյլ և ակունք ովատուականք , ող ակն վոյ :

նի, անդամանդ : ամեթոս, և այլ տկունք : Ունի
և բջմ ինքնաբուղիս ջերմուկիս, և աղբիւրս բժշկա-
կանս . ևն :

Հ. Վաճառք Սպանիս :

Ե երքին վաճառականութեապանիոյ՝ նուազ է յոյժ .
մի՝ առ ՚ի չփոյէ անդ յաճախուեն մեծամեծ գե-
տոց, ող զի ը այնս մարթասցին տանիլ զվաճառո-
հեշտեաւ և սակաւ ծախիւք, զի ծախիք ցամաքային
Ճնինհի կարի ծանր են : Երկո՛ սակս ծանրաբեռն
մորսից, որք զանցանեն զբուն գնով իրացն . Նոյն-
պէս և վաճառականութեան ՚ի նաւահանդստէ առնաւ-
ահանդիսաւ՝ գրեթէ գլխավին եղծել և խափանել է
առ երկիւղի ծովային հինից և ասպատակաւորաց :
Խսկ արտաքին տուրքեաւութեան թէպէտ ծաղկել է և
բարդաւաճ, ունելով սպանիոյ քաջոյարմար գիրս
առնաւարկութի, և պատուական նաւահանդիսաւս
յովկիանոսն, և ՚ի միջերկրական ծովու, յորոց ար-
ձակէ նաւայ յափրիկէ, և յայլ և այլ կողմանս ատիոյ .
և մունդ յամերիկա, ուր մեծամեծ նահանդս ունի
ը իւրով մարութ, յորոց բաց ՚ի շաքարէ, և յայլ
պէսսպէս իրաց, ամի ամի գայ ՚ի սպանիա բջմ գանձ
արծութոյ և ուկւոյ . սակայն ՚ի վը այսր մօի՝ տղ-
քատութի մեծ է ՚ի սպանիա . որոյ պատճառն է
նուազութի երկրադործութե, և այլոց հարկաւոր
ծոյականն սրբնեստից : Խսկ պատճառ նուազուեն նց՝
է նախի՝ անգործասէր և մեծամիա բարք բնակչաց
նը, որք գժաղատեհ իմն համարին անձանց յայնպի-
սի նուաստ ծոյին գործո վաստակիլ . ուստի և ՚ի
սակաւ արհեստաւորսն՝ որք գտանին ՚ի սպանիա .
մեծ մասն գաղցիացիք են : Երկո՛ ծանր հարմէ-
եդելը ՚ի վը արհեստական իրաց, ող և ՚ի վը կե-
րակրելինաց . յայն սակս ը ասելոյ ուրումն, ՚ի
սպանիա՝ ոչինչ գործելին է շահիլ . խսկ գործելի՝
կորուսանել . զի վայրապար կորուսանէ դաշխա-
տանս . զի զոր շահի յարհեստէ իւրմէ, վճարէ նո-
վաւ զհարկս :

Ուստի և ամի ամի անբաւ գրամք ելանեն ՚ի սպա-
նիոյ սակս ցորենայ՝ և այլոց պէսպէս արհեստա-
կերտ իրաց, առ ՚ի կարեւոր պէտս հանդերձից, և
կարասեաց տանց, և զարդուց . ևն : Զի ՚ի գաղ-
ցիոյ ը ունի պէսպէս ուկեհուռն և արծաթաթել-
կերպասս, և այլ տղլի աղբի ծաղկերանդ, և ան-

ծաղիկ մետաքսեայ կերպասս , ոսկի և արծութի ժապաւէնս , այն է՝ շերիտ , սունազանս մետաքսեայս և ասունիս . ևն : 'ի հոլանտացւոց պէսպէս կտաւս , և ըեհեղս , պաստառակալս սեղանոյ , և ջուխա . ևն . այլ և համեմս , դր պղպէղ , ընկոյզ հնդկաց , որ է հինտիօտան ձէվիզի , մեխակ , կինամնն՝ որ է դարչին . ևն : 'ի ոյնպէս և յանգլիացւոց բաց 'ի ցորենոյ՝ և 'ի ջուխայէ՝ և փոքրիկ անուաւոր ժամացուցից՝ ըունի և այլ ազգի ազգի արհեստա կերտ դործածս :

Իսկ վաճառք , զոր սպանիա մատակարարէ այլոց թիգրութեց՝ դլխաւորքն են բուն բերք երկրի նր . դր քրքում , զոր բշմ անդամ թանան 'ի ձէթ , ոող զի ծանրացի կշիռն որով շահին յոյժ . պէսպէս ծաղկահու գինի պատուական , ձէթ , շաքար , մետաքս , մեղր , մոմ , նուշ , նարինջ , ըմբոն , օհառ , աղ , և ասր բշմ , զոր մնւնդ անդիացիք առնեուն , թէպէտ և ինքեանք ունին յանգլիա տար պատուական , բայց չէ բաւական նց . զի անբաւ ջուխոյս , և այլ պէսպէս ասունեղէնս գործեն , որք և ամտեղիս անուանի են : Թանգ զվաճառս , զոր սպանիացիք բարձել ըերեն յամերիկոյ . դր մարդարիա , պէսպէտ ակոնս պատուատկանս , նիւթ կապուտակ պատուական ներկոյ , վանիլիա , և գտփաօ , որք են նիւթ չքոլաթի՝ որ յաճախել է յոյժ յեւրոպիտ , մնւնդ 'ի սպանիա . զի ասին թէ ամի ամի լոկ 'ի սպանիա ծախի իբրև 3 . 700 . 000 . օխայ գագատո . և 4 . 704 . 540 . Անէտկեան ոսկի գահեկան 'ի պէտս չքոլաթի : Թանգ և զայլ սոցին նման վաճառս բերեալս ոչ միայն յամերիկոյ , այլ և 'ի կողմանցն ասիոյ , և ափրիկոյ :

Հ . Համալսարանի և Դպրութի Սպանիա :

Բայ 'ի բազմազատիկ երեկելի երեելի գպրոցաց գիտունց , և վարժարանաց պէսպէս ազատական արուներակաց , դր նկարցուն , քանդակագործութե , և ճարտարապետութե , ունի և 21' իսկ ըսլոյ 28 համալսարանս , որք են սոքա :

Ալգուլս հէնարէն .
Դուլքո .
Ալվարտո .
Ալհելս .

Կառնադա .
Վալենյա .
Միկալենյա .
Կանդիս .

Ռիաթէ .
Փանդլանա .
Էպիթէլա .
Սարախանա .
Վա-

Սպանիս :

Վայսագալիք .

Ուժելէլու .

Հռուեստա .

Սալամանդր .

Քամիստէլա .

Չերվերա .

Միջելա .

Ուշեցօ .

Դառախնա .

Գաղնա .

Ուսնանա .

Անա այօջափի համալսարանք են 'ի սպանիա . սա կայն 'ի վրա այսր նմի չեն այնշափի ինչ ծաղկել անդ դիտունք , և ոչ յաճախտւե սպագրութե գրեանց՝ ողպ արժանն էր . և այն զի՞ սպանիսցիք արագու միտ են և քաջայարմարք դիտութեց , և կարօղք 'ի ճառել ղամբ դիտութեց , ողպ ցուցանեն իմաստալից մատեսնիք նոխնի և այժմեան մատենագրաց նց . որոյ գլխաւոր պատճառք երկու են : Մի՛ անհարթ և սարժանելի մեթուստ , և եղանակ ուսումնաց , զոր ունին 'ի դպրոցս . յորս բաց 'ի առմական փիլի սոփօյից՝ այլոց վերջին թմրի ներհուն և քաջափորք փիլխառփայից անունանք՝ գրեթե բնաւ ոչ լինին լսելի : Երբեգ՝ ճիշդ և ըներկար քննութիւն մատենից , զոր ունին ապագրել . վա զի ողպ ասեն , 'մինչև մատեան ինչ 'ի սպագրուն ելցէ , ը բջմե ճիշդ փորձս պարտ է անցանել :

Եւ չէ իսկ թոյլ տունեալ սպանիսցի մատենագրաց արտաքոյ սպանիոյ տալ 'ի ապագրուն դիրս ինչ առանց հրամանի . իսկ հրաման յայլ ու տպագրելոյ դժունարին է յոյժ 'ի ձեռս բերել : Ծիկոպէտ այս սովորուն սպանիոյ , եթէ պահեսցի 'ի չոփաւորել կուղարի , ոչ եթէ արգել ինչ է ուսմանց , և ճշմարիտ գիտութեց , այլ յաւէտ ծաղկեցուցիչ և բջմե մեծամեծ չարեաց իսպան . քզի սովաւ խափանին տպագրունք պէսպէս ինասակար և ապականագործ գրոց : որք բերին յեղծումն և յապականութիւն ոչ միայն ածապաշտ վարուց , և կրօնից սրբութե , այլ և ամ կարգաց քղքական կենաց : Ապա թէ խստուն նախանձայուցուն անցանիցէ զափի , յայն ժամ յիրաւի է ասել , թէ ը որոման և զցորեանն 'ի բաց խլեն , որով և զըկեն զդպրոցս 'ի կարենը ցորենոյ դիտութեց :

Հ. Ալբերտարանի Սպանիս :

Պալէտօ .

Կառնադա .

Սարահսա .

Միջելա .

Գուրիոն .

Վալենյա .

Քամիստէլա .

Դառախնա .

Ապենան գոլետոնի՝ է նախապատիւն մետրապօլիս համօրէն սպանիոյ . և դիւնանագպիր քասդիլիոյ .

և ատենակալ կմ խորհրդական գլխաւոր աւտենին սպանիոյ . որ և ունի շիւրե 8 եղասուն : Աքենպան սիվելիոյ՝ ունի շիւրե եղասունս մալակայ , կվատիկեայ , քանարեան , կմ երանելեաց կզշոյն , և կեղանեան կզզոյն : Աքենպան քոմիոստելայ՝ ունի շիւրե 12 եղասուն : Նոյնպէս և այլք ունին շիշանութ իւրեանց եղասունս , որ յաւէտ , և որ նոճազ :

Բ. Եպողանտ Սպանիո :

Սպանիո ունի 47 եղասարանս , զորսյառաջիկայդ ունիս տեսանել :

Աղաւեսպանիո .	Կարէս .	Թռէրչել .
Կրէնլս .	Գորդանլս .	Թռառազնա .
Քալահօռա .	Եռէն .	Եսգա .
Մելունա .	Մալակա .	Հռուեստա .
Ռոմա .	Կիւտրիտս .	Պազլասմբրօ .
Վալլա .	Վալերիա .	Վարդարաշին .
Լեն .	Քարդանինս .	Պարւելանա .
Միկլենյա .	Որոհչելս .	Ճերնեն .
Վաբորիա .	Սելերոկ .	Վար . կմ Վիգլե .
Զամբա .	Մանափռեցո .	Ո-րիել .
Փալենյա .	Թռասի .	Լերիտա .
Սալամանդա .	Լուսի .	Սոլօնա .
Հոռուերինեան գաղատ .	Որենսե .	Թռոբնա .
Պատայէօդ .	Ուլիեցո .	Վաթօրիա .
Գորէտ .	Սոնդանդէր .	Ուլիեցո .
Փլազէնլու .	Փամիլունա .	

Ահա այսցափ են եղասարանք սպանիոյ . թող զեղասարանս փսլէրեան և քանարեան կզեհաց , և այլոց՝ զոր ունիյայլ և այլ կողմանս Յի , մնւնդ յամերէ կայ . զորսյիւրսքանցիւր տեղիս իւրեանց ունիմք նշանագել :

Ըստրութին և առաջարկուին համօրէն արքեպսաց սպանիոյ՝ թիգրին է . իսկ հաստատութին հռամմայ հյրպտին : 'Ի 1753 եղե դաշնադրութին իմն 'ի մէջ արքային ուղանիոյ և հռովմայ հյրպատին . յորում հաւանեցաւ հյրպտն , զի զստորին եկեղեցական սլաշտօնաստրութիս թիգրն ինքնին տացէ , որով և խտփանեցան անբաւ ծախսքն , զոր առնեին 'ի հռոմ եկեղեցականք սպանիոյ , առ 'ի ձեռոս բերելոյ զպաշտօնաստրութին իմն : Եւ 'ի 1761 կարոլոս արքայն

սպանիոյ՝ արտը օրէնս . զի կոնդակք , և այլ զինչ
և իցէ հրովարտակք , կմ վճիռք հռովմայ հյրակին ,
(որք հային մուծանել օրէնս ,) առաքելք առ մաս
նաւոր անձինս , կմ ատեանս դուստնի , առ արքնակս
ոք , կմ առ եղաս , և կմ առ այլ առաջնորդ սպա-
նիացւոց թրուե , մի բնաւ հրատարակեսցին , և մի
'ի գործ դիցին . առանց նախընթաց քննուե : Վոյ
նուիրակն հռովմայ հյրակին՝ որ նստի 'ի սպանիա
ովարտապան է զայնալիսի գրուածս առաջի առնել
թքրին . իսկ թքրն առաքէ 'ի մեծ ժողովն քասդի-
լոյ քննել և դատել , եթէ իցէ մարթ 'ի գործ
դնել զայն առանց վնասու օրինաց թքրական իշ-
խանուե , սովորութեց , հնրկաց խաղաղութե , կմ
իրաւանց երդի ուրուք :

Ֆ . Բարէ Սպանիայոց :

Սպանիացիք ըստ գունոյ առ փոքր մի 'ի թխագոյն
հարկանին . հերք նց սեաւ են , և դիրք մար-
մույն սովորարար վայելու և բարեշափ : Հաստա-
տուն և անփոփոխ 'ի խնդս . հանդարտ և ծանր 'ի
շարժմունս . վեհանձն և մեծախնդ , առատաձնան և
մեծադործ . 'ի զարդս զգեստուց շքեղ և մեծածախ .
զի զարդք մեծամեծաց նց մեծագին են ոսկիակերտ ,
և ականակուռ . նոյնպէս և 'ի կարասիս և 'ի զարդս
տանց՝ և 'ի բազմութ ծոյից՝ շափազանցք առաւել ք-
զփորդուքալս : Խորշին 'ի նունաստ գործառնուեց ,
յայն սակա և 'ի տնտեսական կառավարուե կարի նը-
ռուազել գտանին , զԹմ կառավարուե տանց թողեալ
'ի ձեռս ծառայից . և այն՝ ոչ միայն մեծատունք , այլ
և հնրկ և ռամիկ ժղովդն . որք և նորին աղագաւ
յօժար են և հակամէտ 'ի դատարկուե , անարժան
համարել անձանց յերկրագործուի , և յայլ ստորին
արհեստս պարապիլ , թէպէտ և կարեոր իցեն , և
մեծապէս շահաբեր . վոյ ստկաւ տրուեստաւորք
գտանին 'ի սպանիա 'ի բուն սպանիացւոց . այլ լը
մեծի մասին են օտարազգիք , մնւնդ գաղզիացիք :
Նոյնպէս խորշին և 'ի զինունորուե . վոյ զի զինուն-
րական վիճակն խոտան համարել է առ նո . ուստի
հազիւ ուրեմն ինքնակամ մոտանեն 'ի զինունորուե .
այլ որք ենն՝ գրեթէ առ հնրկ բռնի մուծել են :
Դ կերակուրս և յըմկելիս շափաւոր են . այլ կարի
յահարտեն զներմացուցիւ համեմս , մնւնդ զպշպեղ .
և բաց 'ի գինուոյն՝ զոր ըմուեն 'ի սեղանի , սովորու-

Թէ ունին զկնի սեղանոյ ըմպելցքի զօրեղ . այն զի՝
և դինի սպանիոյ զօրեղ է յոյժ : Եւ ևս յաւուրն
երկիցս ըմպեն չոքոլաթ . և ահա այս մամ շամաքե-
ցուցիչ են ներքին կարեռը խոնաւութե՛ . նմին իրի
սպանիացիք գրեթէ առ հորկ ցամաք են մարմնով ,
և սակաւակեացք . և հաղիւ գաանին առ նս սպա-
րարոք մարմնով : Եւ ևս կուրուի և աշացաւութի
կարի յանախ է 'ի սպանիա . զորմէ բնակք ասեն ,
ոյատնառիւ 'ի ջերմէ 'ի ցամաքեցուցիչ կերակրոց
և ըմպելեաց :

Ժա . Ավանդու :

Ա սպանիա 'ի նախանումն խօսէին 'ի բարբառ կան-
գաբրացւոց . որ և այժմ կայ մնայ 'ի կանդաբ-
րիա , այն է 'վիպանեա , յալավա , 'ի նաւառուա սպա-
նիացւոց , այլ և 'ի նահանգս ինչ գաղղիացւոց սահ-
մանսկիցս սպանիոյ . այլ յետոյ խառնել 'ի նմ պէս-
պէս լեզուաց , զր փիւնիկեցւոց , կարկեդոնացւոց .
գթաց , արաբացւոց , և առաւելապէս լատինաց-
ւոցն , ծագեցաւ սյժմեան լեզուն սպանիոյ , մնանդ
թէ քասգիլիոյ . որ համարել է բուն և հարազատ
լեզու սպանիացւոց . յորմէ մեծապէս տարբերին
լեզուք վալէնցիոյ , քադալոնիոյ , արագոնայ , և
լիւսիանիոյ : Բարբառ սպանիացւոց թէպտ բնմ
խառնակութիս ընկալաւ յայլ և այլ լեզուաց , սա-
կայն տակաւին առաւել հպաւոր գտանի լատին
լեզուի , ք զայլ ամ լեզուս եւրոպացւոց , որք ծա-
գին 'ի լատին լեզուէ :

Ժք . Ավանդու , և Կոռուլութե՞ն Սպանիա :

Ա յ յայտ , թէ երբ , և ուստի սկզբնաւորեցան
ընտակիւք սպանիոյ . բայց այս ստոյգ է , զի 'ի
Ժմիս փիւնիկեցւոց տրուե կային 'ի նմ բնակիչք ,
ը որս և վաճառականուին առնեին փիւնիկեցիք :
Ըսդ այն Ժմիս մտին 'ի սպանիա և կարկեդոնա-
ցիք , և տիրեցին նմ , յորոց առին յեւոյ հսովմայե-
ցիք . Ապա 'ի սկզբն ե գարուն մախն անդ վկետք ,
ալանք , և վանդալք . այլ փութով յաղթեալ նց
արևմտեան գթաց , հանին զնո՛ի սպանիոյ , և ինք-
եանք տիրեցին նմ . որոց առաջին թիգր 'ի սպա-
նիա եղեւ գիեաերիկոս եկիդ . և այնուհետեւ բնա-
կեցք սպանիոյ : որք եին յայլ և այլ ազդաց , առ սա-

կաւ սակաւ խառնեալ միացան ը գութս , և եղեն ժղվդ մի , և իրը ազգ մի , յորմե իջանեն այժմեան սպանիացիք :

'Ի 589 'ի հրաժարիլ հսեկարդոսի արքայի դժաց՝ կի՞ սպանիացւոց՝ յարիսսեան աղանգոյն , ժողովն դուշտոյ ետ նմ զայս վերտառուի . * Զերմեռանդն քրիստոնեայ , զկնի ժմկաց խափանեցաւ . և փխկ նր թքքք սպանիոյ կոչեցան՝ Ուղղադաւան . առ ՚ի զանազանուի ՚ի հերեսիովտաց , և ՚ի հերձուածողաց : Յետ այսորիկ ՚ի 712 դաւաճանութ միուն յիշխանաց անախ սպանիոյ յուշիանսս անուն , և ձեռնորդութք արքեպիսին սիվլիլիոյ , մատնեցաւ մասն ինչ սովանիոյ ՚ի ձեռս արտօբացւոց , որք ամս իբրե 400 տիրեցին նմ , ուղղութք և արդարութք կառավարել զիա . և բջմ շինութիս գործել ՚ի նմ , և պէսպէս ուսմամբ ծաղկեցուցիլ զդպրոցս գորառվայ , գուլետոյ , և սալամանքայ , մուծել ՚ի նմ զաստղաբաշխութիս , զտսումականուի , այն ինքն է՝ մաթէմաթիքա , զիիլիսոփայութիս , զբժկականուի , և զայլ գիտութիս : Խսկ պեղագիսս սըքքայն գժաց կմ սպանիացւոց՝ հանդերձ բազմութք մեծամեծաց՝ որք ՚ի կողմն նր էին , խոյս ետ ՚ի լերինս ասդուրիոյ , կալիցիոյ , կանդաբրիայ , և վիսքայեայ : Եւ այլ գաղթական գժաց կի՞ սպանիացւոց՝ էանց ՚ի նաւառուաս , յարագոնս , և ՚ի բնիրընեան լերինս : Եւ յայսմանէ սկիզբն եղև միահեծան տրուե սպանիոյ բաժանիլ ՚ի բջմ տրութիս , և թէքրութիս : Վս զի իշխանացն գժաց սպառակտելք ՚ի միմեանց , իւրաքանչիւրն կալաւ մի մի նահանգ . և անունանեաց զանձն թէքր , և զնահանգն՝ թէքրութիս . որք և յարաժամ ը միմեանս՝ և ը արաբացիս՝ մարտ անուուէր մղէին :

Ապա զկնի ժմկաց ՚ի հարկանել ե փերդինանդոսի արքային արաքոնոյ զարաբացիս , և ՚ի շնջել զտրութիս նց ՚ի սոլանիայ ՚ի 1492 , մասամբ իմն պտղմաւ , և մասամբ իմն դաշնադրութք և խնամութք , այն բազմապատիկ տրուելք կմ նահանգք սպանիոյ միացան ՚ի մի թէքրութիս . որք և կացուցանեն զայժմեան թէքրութին սպանիոյ . բայց ատակաւին պահեն զանուն թէքրութիս . ուստի թէքրք սպանիոյ ՚ի վերտառութիս իւրեանց յիշատակեն զնս անունամբ թէքրութիս : Արդ թէքրութին սպանիոյ սկսել ՚ի թէքրաց անախ դժաց :

լիներ ընտրութ մինչև 'ի եւ կը գէփէ փոնսոս , թէ պէտ յայնմ միջոցի պէս պէս փոփոխուիս կրեաց . յորմէ սկսաւ լինել ժառանգութ՝ յանդրանկանէ յանդրանիկ . յոր կարեն յաջորդել և կանայք 'ի պահասիլ արունի յարբայական զարմէ :

Իսկ քղթկան կառավարութիւն սպանիոյ՝ է միտպետական 'ի սկզբանէ մուծեալ 'ի գլծաց . ուսկայն թէրք նը 'ի դիպուածու ծանր ծանր իրողուեց միշտ վարեցան խորհրդով մեծամեծաց Շին : Ապա սու վորութիւն եղև նց զմեծամեծ իրողուեց թէրութէ խորհրդածել յէկեղեցական ժողովս , յորոն նախ առաջին գեկեղեցական իրս բացորոշէին . և առա ըշավերաբերելու առ քղթական կառավարութ թէրութէ . և խորհրդականքն էին եղասւնք , և մեծամեծք թէրութէն : Բայց այժմ զինի դիլիլ փիլիպպոսի ոչ ևս գումարի այսպիսի ժողով . իբր ոչ եթէ խափանել են այն առաջին իրաւունք ուխտին եկեղեցւոյ , և մեծամեծաց սպանիոյ , վոր զի լը իրաւագիւտաց սպանիացւոց , և այժմ եթէ հարկ հսրկց բարւոյն պահանջէր , գումարէր զնոս արքայն 'ի ժողով . ուր ունին զնոսն իրաւունս զոր յուջն ունէին . այլ առ 'ի չդոյէ այսպիսի հարկի , ամ ինչ 'ի մասնաւոր ատեանս կմ 'ի ժողովս վճարին , որոց գլխաւորքն մետասան են :

Ժողով կմ ատեան Շին սպանիոյ , իտալիերէն Քօնութիւն ու ըստարո անունանել , զոր 'ի 1526 կացոյց և կարոլոս կայսրն . յորում է մի ոմն նախագահ , հանդերձ քանի մի խորհրդականք : Գործ այսր ատենի առ սակաւ ստկաւ նունազեցաւ յոյժ . զի այժմ դրեթէ չունի այլ ինչ , բայց եթէ տալ պաշտօնինչ , կմ անուն պատունոյ ումեք յազնուականացն սպանիացւոց , ուկս քաջագործութէ , կմ այլ ինչ արդեանց յօդուտ հնրկց :

Գերագոյն ժողով , կմ ատեան պազմի , զոր 'ի 1714 կացոյց փիլիպպոս արքայն . յորում էն քանի մի խորհրդականք կմ ատեանակալք , յորոց մի ոմն է դիւնադպիր , և այլ ոմն գանձապետ . և երեք ընթերակայք , կմ առաջակայք , որք և են պաշտօնատարք արքայական ատենին , կմ ժողովոյ քաւ-

դիլոյ :

Ժողով կմ ատեան սրբունի . և գերագոյն վսեմափառ արքայի , կմ (Նմբայական ատեան քասդիլիոյ . որ և է գերագոյն ատեան համբէն ուրուեն սպանիոյ . զոր 'ի 1608 դիլիլ փիլիպպոս բաժանեաց 'ի 5 սրբաւ :

սրահս կմ խորհրդարանս . յորոց իւրաքանչիւրն դատէ զայլ և այլ դատս : Յնչնում խորհրդարանի՝ է մի ոմն նախագահ , և եօթն ատենակալք , և երկու գահձառեսք : Յեկդումն՝ չորս ատենակալք : Յերդումն՝ որ և կոչի Հաղար հինդհարիւրոց , են հինդ ատենակալք : 'Իչորդումն՝ որ կոչի խորհրդարան արդարուե , են չորս ատենակալք : 'Ի հինդերդումն՝ որ կոչի խորհրդարան գաւառական , նոյնպէս չորք ատենակալք են . այլ բաց 'ինոցանե են 'ի նմ այլ ևս հինդ գաւառորք վ՛ը այլ և այլ երողութեց :

Նահանգք թրութեն սպանիոյ բաժանել են 'ի մէջ եօթն ատենակալաց առաջնոյ խորհրդարանին . իսկ յորոշմունո ծանր ծանր իրողութեց՝ հնդեքին ոք գան 'ի միասին :

Ժողով կմ ատեան արքունի , և գերագոյն ատեան հնդկաց . յորում մի ոմն է նախագահ . և 17 ատենակալք , և 2 գահձառեսք , մի՝ վ՛ը բերուայ , և միւս ևս՝ վ՛ը նոր սպանիոյ , և վ՛ը այլոց գործառնութեց : Այս ատեան ունի զշերագոյն իրաւասարուե 'ի վ՛ը ումի , որք ենին յամերիկայն սպանիացոց , թէ 'ի ծովու , և թէ 'ի ցմքի :

Ժողով կմ ատեան արքայական ասպետական կարգաց , կացուցել՝ 'ի 1480 . որ և բաժանեալ է յերկուս որսահս կմ խորհրդարանս . յորոց մին՝ է լոկ վ՛ը կարդի սեյն յակոբայ , իսկ եկդն՝ վ՛ը կարդացն քալադրավայ , և ալքանդարայ . որ և գատէ զամդատոս վերաբերելս առ կարգս ասպետաց :

Ժողով կմ ատեան արքայական վ՛ը պէսոլէս իրողութեց թէքրուե . ունկ վ՛ը հարկաց , մաքսից , վճռկանութեց , ևն . զոր կացոյց ե փիլիպոս արքայն սպանիոյ . որ և բաժանի 'ի 4 սրահս կմ խորհրդարանս , յորում է մի ոմն նախագահ . և 18 ատենակալք : Գերագոյն կմ ըհանուր ատեան սրբաքննութե , որ կառուցաւ 'ի 1478 'ի փերդինանդոսէ արքայէ , և 'ի կողակցէ նորին դշխոյ եզիսաբեթէ , միջնորդութ կարդինալ պետրոսի կոնզալէդ մէնտողեան . զոր կացուցանէ մի ոմն ատենակալ , որ կոչի ըհանուր քննիչ , որոյ իշխանութն մեծ է յոյժ , զոր ինքնին թէքրն ընտրէ , և այլ 6 խորհրդականք . ը որս է և մի ոմն ածաբան դոմինիկեան , և այլ բաժմութիք սպաշտօնատարաց : Գործ այսր ատենի է հօկել 'ի վ՛ը իրաց , որք վերաբերին առ հաւատս . և առ քրիստոնէական կրօնու : Աւստի ձգի իշխանութիւ

նր՝ ՚ի վլր հրեից, մուղքիաց, հերետիկոսաց, և ուրացողաց : Բայց առաւելապէս ՚ի գործածէ զայն ՚ի վլր գրեանց, որք հանդերձել են տպագրիլ : Բաց յայսցանէ են այլ ևս ժողովք, և ատեանք կարգեալք ը միմէամբք • ոնդ և իւրաքանչիւրնաշանդ և գաւառու ունի իւր սեփական ատեան դաստինի ցորոց ՚ի վերջը մարթ է բողոքել ՚ի մի ՚ի գերագոյն ատենից նախագրելոց :

**ԺՇ. Կնիտ, Վէրպառուի, Մշակու, և Զօրտ
Սպանչու :**

Փոքը կնիք սպանիացոց տրուե՝ որ և յաճախու գոյնս ՚ի գործ ածի, է վահան ձուաձև բաժանեալ ՚ի շրս խորանս . յորոց վերին աջակողմնան խորանն, և սառիրին ձախակողմնանն, ունին մի մի սակի դղեակ հանդերձ երեւք բրդօք կմ աշտարակօք վլր քասդիլիոյ : Իսկ վերին ձախակողմնան խորանն՝ և սառիրին աջակողմնանն՝ ունին աւիւծ թագ ՚ի գլուխ վլր լեռնի թնդորուե . իսկ ՚ի մեջն վահանին՝ են երեք շուշանք մու անիսվայ . և ՚ի գլուխ կնքոյն՝ թագ կայսերական : Իսկ ՚ի մէծ կնիքն սպանիոյ՝ են նշանք և այլոց բզմց նաց, յորոց վլր աիրեն սպանիացիք, կմ իրօք և ներդործութք, և կմ անուշամբ և եթ, իրը զի երբեմն ը նց տրուը եղեն . և ՚ի գործ ածելով զնշանս նց, ցուցանեն թէ և ոյժմ ունին իւրաւունս ՚ի վլր նց :

Իսկ վերտառութէ արքային սպանիոյ՝ ը համօրէն ըարձակուե տրուե իւրոյ, այս է : Ազս անուն նոր հօն այ թիր տառիւնոյ, լեռնի, արակնայ, երկոց սին շիայից, եղնայ, նառանայ, իսանադայ, դալքոյ, վա մէնցիայ, իսլիցիոյ, նուշերիայ, սիլվերիայ, լեռտենայ, գու գուսիտայ, նուրլիոյ, եանեայ, աշխարշեայ, ը մէ շիրայի, միզուալյանայ, տանարեան իմ նրանեւեաց իշեաց, արեւելեան և որեւնիտեան հնդիաց, իզնեաց . և յամադի ու իսանասի : Ազը լիդուտն առողբիոյ . Պատու պրուրիսեայ, պրոպանդէայ, և Գլուխու : Իսլիան հապալուրիայ, ֆիւնք ըստի, թիրուսի, և պարէւլուս, իսլիան վիստեայ, և նուշնայ, ևն : Զայսպիսի ըարձակ վշրտառութէն ՚ի գործածեն թիրք սպանիոյ . իբր ոչ եթէ համարելով զանձինս ներդործութք տիրել ՚ի վլր այսշափ այլ և այլ նաց, այլ առ ՚ի պահել զիշտիկ քաջադործուե իւրեանց, որով պրամբ ածին երբեմն զորութիւն և զժառանդութէն նացն այնոցիկ, յորս իրեւ ՚ի

Ե. մասսունս բաժանեալ էր 'ի նախնութն թէքրութին
գթաց :

Իսկ հստառօտ վերաառութի արքային սողանիոյ՝ է
այս : Ուշադասան արքայ սպանիոյ . կմ պարզապէս :
թ. դ. սպանիոյ : Փերդինանգոս ն արքայն՝ 'ի 1500
ընկալաւ 'ի չ աղեքսանդր պապէ զվերտառութիս ,
թ. դ. սպանաւան : Թուպէա զայս վերտառութինան
յն ջին ժմկս ունեին թէքրք սպանիոյ . զե ոնկ վերա-
դոյնդ նշնկեցաք , ժողովը դոլէտոյ 'ի 589 ետ զայս
վերտառութին հռեկարդոսի արքային , 'ի հրաժարիլն
իւրում 'ի հերձուածոյն արիոսի . ուստի առ փեր-
դինանգոսին եղեւ իրմե նորոգութն այնր վաղնջուց
վերտառութե :

Տարեկան մուտք կմ հասք թէքրութեն սպանիոյ՝ պէս,
պէս այլայլութեա կրեցին . զի ը ձիշդ հաշունի Յագ-
րաց , 'ի ժէ դարու բերէին 32 մինչև 533 միլիոն լի-
րէ դաղղիոյ . որ առնէ իրեւ 2 , 763 , 640 . իսկ
երկդ թիւն առնէ 2 , 850 , 000 . Վէնետիկեան ոսկի
դահեկան : Առմ այս գումար յաւարտ նոյն դա-
րուն սակս յոռի և անկարդ անսեսութե այնշափ
նուազեցաւ , զի 'ի մահուն ը կարողոսի հազիւ ժա-
մանէր ց 7 կմ 8 միլիոն լիրէ . որք առնեն 604550
կմ 690910 վէնետիկեան ոսկի : Իսկ փիլիպոս ար-
քայն զնոմ ինչ 'ի բարւոք կարգի եղեալ , աճեցոց
յոյժ զթիքրական մուտք . զի այժմ բոլոր տարե-
կան մուտք կմ հասք թէքրութեն սպանիոյ՝ ը հաշունի
սողանիացւոց՝ է 46 , 884 , 641 . սքուսք սպանիոյ .

որ առնէ 10 , 122 , 820 վէնետիկեան ոսկի :
Ժ. ին համօրէն զօրաց սպանիացւոց տրուե 'ի ժմկի
իւաղագուեն հետեակաց , և հեծելազօրաց , և ծե-
րոց . որք ոչ ևս կարօղ են 'ի գործ զնուուրութ , 'ի
1754 , էր 155399 . յորոց 58802 էին հետեակք .
բաժանելք 'ի 42 գունդս . իսկ մեացելքն հեծելա-
զօրք , 'ի բաց հանել զ4800 , որք անզօր էին 'ի գործ
զնուուրութ . յորու ամի ամի ծախէին 1 , 975 , 370 .
վէնետիկեան ոսկի : Այժմ սովորաբար համարի ու-
նել զօրս 'ի ցամապի՝ 80 հշր , յորժամ է 'ի խաղա-
դութե . իսկ 'ի ծովու՝ 136 նաւս պազմի : Զորս 'ի
ժմկս մարտի բաղմացուցանէ ը պիտելց :

ԺՂ. Արև, կմհ հաւաքատ Սպանիոյ :

Պատ նախնի պատմագրացն սպանիացւոց՝ քրիստոնէական հաւատոք քարողեցաւ 'ի սպանիայ յառաջին դարուն 'ի սրբ առաքելոյն յակովայ զերեդեայ . այլ յետ այնորիկ վերստին զօրացել կռապաշտութեն, 'ի սակաւ ոմանս մնաց քրիստոնէական կրօնն, մինչև ցեկդ դարն, յորում 'ի համօրէն սոլանիա սփիւռ ծաւալեցաւ : Գութք սպանիոյ սուժմկ մի կացին մնացին յաղանդն արիոսի . այլ 'ի գողավանդ գոցէտոյ 'ի 589 առ թրութ հռեկարդոսի արքայի ' հերքել մերժեցին զաղանդն զայն պիղծ : 'ի ժշդ դարուն հերձուածն ըուտերի դաղոնակոս սողոսկել եմուտ և 'ի սպանիա . և զբար յինքն ճգեաց մնդ յիսպաղիա . և 'ի վալեատոլիտ . բայց փութով սառակակուռ բարձաւ 'ի միջոյ 'ի ձեռն տաստիկ սրտծոյ սրբաքննութ ատենին : Դիք բնաւ անդ հրաման, կմթոյլտունի հերեաիկոսաց, կմհ հերձուածողաց, հրապարակաւ կատարել զպաշտամունա իւրեանց . կմթ ունիլ տաճար հրանդարակական : Յաջադոյն և ոչ իսկ բնակելոյ դոյր թոյլտունութի հերետիկոսի, կմթ հերձուածողի . բայց այժմ այն առաջին խստութ արգելման առ փոքր մի նուազեալ է, ուստի գտանին սյժմ օտարազգի լուաերականք, որք անդորր և անվերդով կեանս վարեն . մնդ՝ զիեմէ զրկտնս ինչ, կմթ վաս կրեսցեն յումեքէ սակա կրօնի, նոյն ատեանն սրբաքննութ իրաւունս առնէնց : Առած է 'ի սպանիա, թէ որ զիցը է 'ի լեզուն, աներկիւղ է յարքայէն, և 'ի սրբաքննութ ատենէ :

ԺԷ. Բաժանուան Սպանիոյ :

Պորժամհ հռովմայեցիք տիրեցին սպանիոյ . (որոյ հանդամանք յաջք զայն անծանօթ էր . զի հազիւ ուրեք աւանեն զյիշատակութ ինչ, զնմէ նախնի մատենադիրք յունաց և լատինացոց,) 'Նախ' բաժանեցին զայն ըլլիվոսի դիլք լը . դը 28. յերկումասունս . Յայսիս . և հյայնիս . զայն մասն որ առաւել մօս էր հռովմայեցւոց, կոչեցին յայսկոյս . իսկ զմիւն 'յայնկոյս : Ապա օգոստոսս կայսր՝ որ նոր բաժաննունս արտար յամ կռուս հռովմայեցւոց թրութ, զմասն կոչեցին յայնկոյս՝ բաժանեաց յերկուա . զի 'ի բներէսէսն . և 'ի Լուսիդանէան . իսկ լմասն

զմասն կոչեցել յայսկոյս՝ անոնքանեաց Դրառակինեան
դըւու. որով բոլոր սպանիա՝ թաժանեցաւ յերիս գու-
շառու. թ ՚ի բնէպիսեան. ՚ի Լուսիփանեան և ՚ի Դրառա-
կինեան: Բնէպիսեան յայս անուն անոնքանեալ ՚ի բե-
տիս գետոյն. որ այժմ կուատալդվելիք ասի, կո-
չեցաւ և Տուրքեպանիա. յանուն բնակչաց խրցոց ուզ
ասէ ստրաբոն. որ և ձգել տարածէր ՚ի մէջ անաս
գետոյն (այժմ կուատիանա), և միջերկրեայ ծովու.
ուր այժմ են անտալուսիա, կուանադա, և էսդու-
մատուրա: Լուսիփանիա՝ է այժմեան Ծն փորդու-
քալայ. բայց սահմանք նը ալեսողս օրինակաւ փո-
փոխեցան. է՝ զի Շարձակ էին, և է՝ զի անձուկ.
այլ օդոստոս կայսր եղ նմ սահման ՚ի հարաւոյ՝
զանաս գետ, իսկ ՚ի հիւսիսոյ՝ շդուրիս, այժմ
Տովրո անոնքանել. յորմէ յայտ է թէ փոքր էր ք
զայժմեան փորդուքալ: Իսկ ՚ի անուանեան (որ կա-
